Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ ***http://www.armin.am***

էլ. փոստ՝ ***info@armin.am***

ԱՄՆ-Ի ՇԱՀԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՎԵՐԱՊՐԱԾՆԵՐԻՆ (1915-1917)

ՏԻԳՐԱՆ ՉԱՔԱՐՅԱՆ

Հայոց ցեղասպանության համեմատաբար քիչ ուսումնասիրված բայց հետաքրքրական դրվագներից է Հայոց ցեղասպանության տարիներին ԱՄՆ-ի օգնությունը հայ տեղահանյալներին: Հարցը առավել քիչ է ուսումնասիրվել ԱՄՆ-ի շահերի և միջազգային իրավիճակի գնահատման տեսանկյունից: Մինչդեռ հարցի առավել լայն լուսաբանումը կարող է իր ներդրումն ունենալ Հայոց ցեղասպանության պատմության մեջ ԱՄՆ-ի դերի ու հայության նկատմամբ նրա վարած քաղաքականության վերլուծության խնդրում:

1915 թվականի գարնանը, երբ հայերի զանգվածային տեղահանումներով ու կոտորածով սկսվեց երիտթուրքական կառավարության կողմից նախօրոք ծրագրված Հայոց ցեղասպանությունը, միջազգային իրավիճակը այնպես էր դասավորվել, որ ԱՄՆ-ն Թուրքիայում բացառիկ դեր էր խաղում: ԱՄՆ-ն Առաջին համաշխարհային պատերազմի բռնկումից հետո Թուրքիայի նկատմամբ որոշակի լծակներ ունեցող միակ չեզոք մեծ տերությունն էր: Իր հերթին՝ Թուրքիան միակողմանիորեն կախյալ վիճակում լինելով իր ավագ դաշնակցից՝ Գերմանիայից, բնական է, ցանկանում էր հնարավորինս օգտվել նման քաղաքական այլընտրանքից:

ԱՄՆ-ն դեռ վաղուց ուներ իր հեռուն գնացող ծրագրերն Օսմանյան Թուրքիայում, և հայերին դրանցում հատկացված էր որոշակի դեր: ԱՄՆ-ի՝ Օսմանյան կայսրություն թափանցման առաջին շարժառիթներից էին նրա, այսպես կոչված, «մարդասիրական շահերը»: Դեռ 19-րդ դարի առաջին կեսին այստեղ հայտնված բողոքական միսիոներներն, անհաջողության մատնվելով կայսրության ոչ-քրիստոնյաներին քրիստոնյա դարձնելու իրենց առաքելությունում, իրենց հայացքն ուղղեցին դեպի քրիստոնյա ժողովուրդները, մասնավորապես՝ հայերը: Այստեղ ամերիկյան միսիոներները որոշակի հաջողություն ունեցան: Ինչպես տվյալներն են ցույց տալիս, Հայոց ցեղասպանության նախօրեին Օսմանյան կայսրության տարածքում հայերի մոտ երեք տոկոսը բողոքական էին:[1] Դառնալով բողոքական, նրանք հույս ունեին դրանով՝ գոնե անուղղակիորեն, ստանալ ԱՄՆ-ի նման

հզոր պետության հովանավորությունը: Ինչպես փորձը ցույց տվեց, այդ հույսերը միայն փոքր չափով արդարացան, չնայած՝ իսկապես, ամերիկյան դիվանագետներն ու միսիոներները ջանք չէին խնայում առաջին հերթին հենց այդ մարդկանց օգնություն ցուցաբերելու գործում:

Ամերիկյան միսիոներական կազմակերպությունները, մասնավորապես դրանցից ամենահզորն ու ազդեցիկը՝ ՕՄԼԱԽ-ը (Օտարերկրյա միսիաների լիազորների ամերիկյան խորհուրդ), որի նստավայրը գտնվում էր Բոստոնում, մեծ դեր էին կատարում ոչ միայն հայերի կրթական և մշակութային կյանքում, այլև բավական զգալի չափով ուղղորդում էին Օսմանյան կայսրության և մասնավորապես՝ արևմտահայերի նկատմամբ ԱՄՆ-ի քաղաքականությունը:[2] Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին ՕՄԼԱԽ-ն Օսմանյան կայսրության ողջ տարածքում ուներ 17 հիմնական կայան՝ 174 ամերիկացի աշխատողներով, 9 հիվանդանոց, 425 դպրոց՝ 25000 աշակերտներով:[3] Չունենալով ճշգրիտ տվյալներ, դժվար է ասել, թե այդ հաստատությունների որ մասն է հայերին սպասարկել, կամ աշակերտների որ մասն է եղել ազգությամբ հայ, սակայն ամենայն վստահությամբ կարելի է պնդել, որ դրանց առնվազն կեսն եղել են հայեր, քանի որ այդ հաստատությունները գլխավորապես գտնվել են հայաշատ վայրերում: Այդ կարծիքի է նաև ամերիկյան միսիոներների պատմության ուսումնասիրող Ջ. Գրաբիլը, որի բերած տվյալներով 1914թ. Օսմանյան կայսրությունում ամերիկյան կրթական հաստատություններում սովորող՝ քոլեջի 2500 ուսանողների, բարձր դպրոցների 4500 աշակերտների և տարրական դպրոցների 20000 աշակերտների ճնշող մեծամասնությունը հայեր էին:[4]

1915թ. դրությամբ Թուրքիայում ամերիկյան ունեցվածքը գնահատվում էր մոտ 20 միլիոն դոլար, ներկայացված միսիոներական հաստատությունների տեսքով, ինչի կորստի վտանգն ԱՄՆ-ի՝ Թուրքիային 1917 թվականին պատերազմ չհայտարարելու պատճառներից մեկն էր:[5]

ԱՄՆ-ն, բացի այսպես կոչված «մարդասիրական շահերից», Օսմանյան Թուրքիայում, բնականաբար, ուներ նաև զուտ նյութական շահեր: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին ԱՄՆ-ն մտադիր էր Թուրքիայում մեծածավալ ներդրումային ծրագիր իրականացնել, մասնավորապես՝ ըստ «Չեստերի պլանի» նախատեսվում էր երկաթգիծ անցկացնել արևելյան Անատոլիայում: Սակայն այս և նմանօրինակ այլ ծրագրեր չիրագործվեցին Գերմանիայի ընդդիմության պատճառով, որը ստիպեց թուրքական կառավարությանը չեղյալ հայտարարել ամերիկացիներին տրամադրված կոնցեսիան:[6] Թուրքական շուկայում մեծ տերությունների մրցակցությունը սուր բնույթ էր կրում, և ԱՄՆ-ն այդ մրցակցությունում դանդաղ, բայց հաստատուն ձևով իր դիրքերն էր ամրապնդում՝ ի հաշիվ իր մրցակիցների: 1911-1913 թվականներին ԱՄՆ-ն Թուրքիայից արտահանող երկրների շարքում 4-րդ (ընդհանուր ծավալի մոտ 6%-ը) և Թուրքիա ներմուծողների շարքում 8-րդ տեղում էր (ընդհանուր ծավալի մոտ 3%-ը):[7] Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երբ Օսմանյան կայսրության արտաքին առևտուրը կտրուկ անկում ապրեց և սահմանափակվում էր համարյա բացառապես Գերմանիայի հետ առևտրով, ԱՄՆ-Թուրքիա առևտուրը ևս անկում ապրեց (24 միլիոն դոլար՝ 1914թ., 13 միլիոն դոլար՝ 1915թ., 0,9 միլիոն դոլար՝ 1916թ.): Այնուամենայնիվ, այդ տարիներին ԱՄՆ-ն դարձավ Թուրքիայի՝ իր կարևորությամբ երկրորդ առևտրական գործընկերը,[8] ինչն իրավամբ ԱՄՆ-ի կառավա-

ղողներին՝ պատերազմից հետո Թուրքիայում վճռորոշ դեր կատարելու հույս էր ներշնչում:

Հայոց ցեղասպանությունը, միանշանակ, վնաս էր հասցնում ԱՄՆ-ի շահերին, քանի որ ի դերև էին ելնում հայերին բողոքական դարձնելու նպատակով ներդրված տասնամյակների ճիգն ու ջանքը: ՕՄԼԱԽ-ը նույնպես զգալի կորուստներ կրեց Հայոց ցեղասպանության պատճառով. բազմաթիվ հաստատություններ փակվեցին կամ դադարեցրին իրենց գործունեությունը, իսկ այդ հաստատությունների հայ աշխատակիցները կիսեցին իրենց հարյուր հազարավոր հայրենակիցների ճակատագիրը: Ինչպես նշվում է «Կապույտ գրքում», հայ բողոքական հոգևորականների ու նրանց հետևորդների մոտ 80%-ը զոհ գնաց կոտորածներին, իսկ միսիոներների տասնամյակների աշխատանքը ձախողվեց:[9] Քաղաքական առումով ևս՝ հայերի կոտորածի հետևանքով ԱՄՆ-ն կորցնում էր Թուրքիայում իր համար բավական հուսալի մի հենարան՝ հանձինս հայերի, մասնավորապես՝ բողոքականների: Սակայն այսուհանդերձ՝ ԱՄՆ-ն հայերի դեմ շարունակվող բռնությունները կանխելու նպատակով երբեք պաշտոնապես կոշտ դիրքորոշում չբռնեց թուրքական կառավարության նկատմամբ:

Արդարության դեմ չմեղանչելու համար նշենք, որ Հայոց ցեղասպանության դեռ սկզբնական փուլում՝ 1915թ. ապրիլին, պետդեպարտամենտը ցուցում էր տալիս դեսպան Մորգենթաուին «[թուրքական] կառավարության ուշադրությունը հրավիրել հարցի վրա՝ պնդելով գործնականորեն պաշտպանել հայերին՝ այլ հավատի մարդկանցից»:[10] Այս ցուցումը կատարվել էր ԱՄՆ-ում ռուսական դեսպանի միջնորդությամբ՝ համաձայն ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ V-ի խնդրանքի: Երկու օր անց, 1915թ. ապրիլի 29-ին, ԱՄՆ-ի պետքարտուղարը կրկնեց նույն ցուցումը՝ «...հորդորեք թուրքական կառավարությանը պաշտպանել հայերին և սիրոնիստներին»:[11] Միաժամանակ, ինչպես տեղեկանում ենք Մորգենթաուի՝ պետդեպարտամենտին ուղղված զեկուցագրերից, դեսպանն իր լիազորությունների սահմանում փորձել է մեղմել երիտթուրքական կառավարության վերաբերմունքը հայերի նկատմամբ՝ այդ գործում աշխատելով ներգրավել նաև այլ երկրների, մասնավորապես Թուրքիայի դաշնակից Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի դեսպաններին:[12] Անհաջողություն կրելով, հատկապես, Գերմանայի դեսպանի աջակցությունը ստանալու գործում, Հ. Մորգենթաուն հուլիսի 10-ին թվագրված իր զեկուցագրում հայտնում է պետդեպարտամենտին, որ ինքը մի քանի անգամ զրուցել է Մեծ Վեզիր Սաիդ Հալիմ Փաշայի, ինչպես նաև ներքին գործոց և ռազմական մինիստրների հետ, բայց իր փաստարկներն «արդյունք չունեցան, բացի Կ. Պոլսին վերաբերողներից»:[13] Դեսպանը նշում էր նաև, որ ինքը խորհրդակցել է Օսմանյան կայսրությունում երկար տարիներ ապրած և գործունեություն ծավալած ամերիկացի միսիոներների հետ՝ ստեղծված իրավիճակի հետ կապված հետագա գործողությունների վերաբերյալ: Ըստ դեսպանի, վերջիններս ձեռնպահ են մնացել որևէ կոնկրետ բան առաջարկելուց: Դեսպանը տեղեկացնելով, որ Թուրքական իշխանություններն իրեն հստակորեն հասկացնել են տվել, որ ինքը «իրավունք չունի խառնվելու իրենց ներքին գործերին» հարցնում էր, թե արդյոք պետդեպարտամենտն ունի՞ որևէ այլ առաջարկություն:[14]

Օգոստոսի 11-ին ուղարկած մեկ այլ զեկուցագրում Մորգենթաուն

նշում է, որ ինքը որպես մարդ դժվարանում է զսպես իրեն և «չմիջամտել այդ երկրի ներքին գործերին»՝ կասեցնելու համար մի ազգի ոչնչացման փորձը: Դեսպանը պետդեպարտամենտին է ներկայացնում երեք կետից բաղկացած՝ ներքոհիշյալ աջարկությունը.

1. ԱՄՆ-ի կառավարությունը «մարդկության անունից» պահանջում է թուրքական կառավարությունից դադարեցնել ներկա արշավը հայերի դեմ և թույլատրել կենդանի մնացածներին՝ վերադառնալու իրենց տները:

2. Հնարավորության դեպքում՝ պաշտոնապես խնդրել Գերմանիային՝ ստիպելու Թուրքիային դադարեցնել քրիստոնյա ազգի ոչնչացումը:

3. Պաշտոնական խնդրանք ներկայացնել, որպեսզի թույլատրվի ամերիկացիներին և այլազգիներին այցելել և օգնություն ցույց տալ տարագրյալ հայերին:

Ապա դեսպանն ավելացնում է, որ վերջին կետը, թերևս, ամենաիրատեսականն է, և այն պետք է պաշտպանել ամեն գնով:[15]

Սակայն ամերիկյան կառավարությունը չգնաց այդ քայլերին, քանի որ համոզված չէր, թե այդ քայլերը կտան ցանկալի արդյունք: Ամերիկյան կառավարությունը, ի դեմս պետքարտուղար Լանսինգի, 1915թ. հոկտեմբերի 4-ին հրահանգեց Մորգենթաուին՝ հաղորդել թուրքական կառավարությանը, որ «հալածանքները [հայերի նկատմամբ] ի չիք են դարձնում բարեկամության այն զգացումը, որ ամերիկյան ժողովուրդը տածում է Թուրքիայի հանդեպ»:[16] Բայց սա այն սահմանն էր, որից այն կողմ չգնացին ամերիկյան բողոքները: «Նյու Յորք Թայմս» լրագիրը 1915թ. հոկտեմբերի 16-ի «Մենք այլևս ոչինչ չենք կարող անել» վերտառությամբ իր հոդվածում գրում է, որ ի պատասխան սենատում Նյու Ջերսիի ներկայացուցչի հարցապնդման, պետդեպարտամենտի ներկայացուցիչները հայտարարել են, որ նշված հարցում «դեսպան Մորգենթաուի միջոցով արվող ոչ պաշտոնական բողոքներից ավելի ոչինչ հնարավոր չէ անել»:[17]

Հասկանալու համար պաշտոնական Վաշինգտոնի պատճառաբանությունները բավական է ծանոթանալ պետքարտուղար Լանսինգի՝ ՕՄԼԱԽ-ի նախագահ Ջ. Բարտոնին ուղղված պաշտոնական նամակ-պատասխանին: Վերջինս դիմել էր պետդեպարտամենտ՝ հայերի դեմ գործադրվող «անմարդկային վերաբերմունքը» կանխելու նպատակով որևէ բան ձեռնարկելու խնդրանքով:[18] 1915թ. հուլիսի 19-ին թվագրված իր պատասխան նամակում Լանսինգը նշում է, որ պետդեպարտամենտն արել և անում է իրենից կախված ամեն ինչ՝ «համոզելու թուրքական կառավարությանը, թեթևացնելու այս ազգի [իմա՝ հայերի] վիճակը... Այնուամենայնիվ, - ավելացնում է պետքարտուղարը,- հայերին օգնելու ջանքերը բարդանում են նրանով, որ համաձայն պետդեպարտամենտի ստացած զեկուցագրերի *հայերի հոծ զանգվածներ զինված ապստամբության մեջ են թուրքական կառավարության դեմ* [ընդգծումն իմն է՝ Տ. Զ.] և վերջինս պնդում է, որ այդ միջոցները, որ ինքն է ձեռնարկել, այնպիսին են, որպիսին անհրաժեշտ են այդ ազգից իր պաշտպանության համար»:[19] Դժվար թե ԱՄՆ-ի պետդեպարտամենտն այդքան անտեղյակ լիներ իրերի դրությանը, որ Վանում և այլ հատուկենտ վայրերում հուսահատ ինքնապաշտպանությունը համարեր «հոծ զանգվածների ապստամբություն կառավարության դեմ»: Մնում է այլ պատճառաբանություն՝ ԱՄՆ-ն չէր ցանկանում հայերի պատճառով փչացնել հարաբերությունները Թուրքիայի հետ, թեև հայերին պաշտպանելն էլ, իր հերթին, տեղավորվում էր ամերիկյան շահի մասին պաշտոնա-

կան Վաշինգտոնի պատկերացումներում:

Անշուշտ՝ ԱՄՆ-ում էլ կային անձինք, որոնք համարում էին, որ իրենց կառավարությունը պասիվ դիրք է գրավում Օսմանյան Թուրքիայում կատարվող ոճրագործության նկատմամբ: Կառավարության այդ դիրքի անզիջում քննադատներից էր ԱՄՆ-ի նախկին նախագահ Թ. Ռուզվելտը, որն ընդհանրապես դեմ լինելով համաշխարհային պատերազմում ԱՄՆ-ի չեզոքությանը, պահանջում էր, որ ԱՄՆ-ն պատերազմ հայտարարի Գերմանիային և Օսմանյան կայսրությանը:

1915թ. դեկտեմբերի 1-ին կանադական "The London Free Press" լրագիրն ամբողջությամբ տպագրեց Թ. Ռուզվելտի նամակը Հայերի և սիրիացիների օգնության ամերիկյան կոմիտեի նախագահ, ՕՄԼԱԽ-ի քարտուղար Ջ. Բարտոնին: Ռուզվելտը, մեղադրելով ԱՄՆ-ի՝ իր ժամանակվա վարչակազմին՝ ինքնամեկուսացման մեջ (իզոլացիոնիզմ), այն միտքն էր հայտնում, որ չպետք էր սահմանափակվել միայն կարեկցելով հայերին, այլ այդ կարեկցանքը պետք է ուղեկցվի կոնկրետ գործողություններով:[20] Ավելորդ չի լինի հիշեցնելը, որ այդ կարգի հայտարարությունները դժվար թե կարելի լինի «հայասիրական» որակել: 1906թ., երբ «հայասերի» հռչակ վայելող նույն Թ. Ռուզվելտին դիմեցին աշխարհի տարբեր ծայրերից հայեր, եվրոպական երկրների խորհրդարանականներ՝ եվրոպական մի շարք երկրների հետ համատեղ Օսմանյան կայսրությունից հայերի համար երաշխիքներ պահանջելու առաջարկով, նա այդ բոլոր դիմումները զանց առավ, պատճառաբանելով, որ ԱՄՆ-ը չի ստորագրել 1878թ. Բեռլինի կոնգրեսի պայմանագիրը և հայտարարելով, որ այդ ջանքերը օգուտի փոխարեն վնաս կբերեն:[21]

ԱՄՆ-ի պաշտոնական շրջանները հակված էին երկիրը հնարավորինս հեռու պահել պատերազմից և, հետևաբար, չէին ցանկանում սրել հարաբերությունները Թուրքիայի հետ, մանավանդ, որ հարաբերություններն առանց այդ էլ Թուրքիայի ավագ դաշնակցի՝ Գերմանիայի հետ պարբերաբար սրվում էին՝ ստորջրյա պատերազմի հետևանքով: Այս կարգի ամեն առիթ օգտագործում էր Անտանտը՝ ամերիկյան հասարակական կարծիքն իր կողմ գրավելու և ԱՄՆ-ին պատերազմի մեջ ներքաշելու նպատակով: ԱՄՆ-ի առաջ դրված էր բարդ երկընտրանք՝ պաշտպանել հայերին՝ Թուրքիայի հետ հարաբերությունները փչացնելու գնով, թե ձևանալ անտարբեր ու ենթարկվել իր և Անտանտի երկրների հասարակական կարծիքի կողմից դատապարտման: ԱՄՆ-ն գնաց միջին ուղիով, այն է՝ Թուրքիայի հետ պահել բարեկամական հարաբերությունները և, միաժամանակ, հնարավորին չափ պաշտպանել հայերին: Որ ԱՄՆ-ն շահագրգռված էր Թուրքիայի հետ բարեկամական հարաբերությունների պահպանման մեջ, հավաստում է այն փաստը, որ անգամ 1917-ին, երբ արդեն երկիրը մտել էր պատերազմի մեջ՝ Անտանտի կողմում, այդպես էլ պատերազմ չհայտարարեց Թուրքիային և այդպես էլ մնաց մինչև պատերազմի ավարտը: Հատկանշական է, որ Թուրքիան ինքն էլ շահագրգռված չէր պատերազմել ԱՄՆ-ի դեմ: Ինչպես նշում է պատմաբան Ու. Տրումպենները, 1917թ., երբ ԱՄՆ-ն պաշտոնապես պատերազմի մեջ մտավ Գերմանիայի դեմ, վերջինս Բ. Դոնից պահանջեց խզել իր բոլոր հարաբերությունները ԱՄՆ-ի հետ: Թուրքական կաբինետը միակարծիք չէր այս հարցում, և հարցը շուրջ երկու շաբաթ քննարկելուց հետո միայն, 1917թ. ապրիլի 20-ին, Թալեաթը հաղորդեց Թուրքիայում Գերմանիայի դեսպան Կյուլմանին, որ ԱՄՆ-ի դեսպանն արդեն տեղեկաց-

վել է Թուրքիայի և ԱՄՆ-ի միջև դիվանագիտական հարաբերությունների խզման մասին:[22]

Սակայն թուրք-ամերիկյան նման հարաբերությունները, ինչքան էլ կարող է պարադոքսալ թվալ, առանձնապես բացասաբար չէին անդրադառնում հայ-ամերիկյան հարաբերությունների վրա: Եվ եթե հայերին ցույց տրվող օժանդակությունն այդ հարաբերությունների պատճառով չէր ընդունում պաշտոնական կերպարանք, միևնույն է, շատ փաստեր խոսում են այն մասին, որ դրանցում այս կամ այն չափով պաշտոնական Վաշինգտոնը մասնակցել է: Մասնավորապես, ակտիվ ջանքեր էին գործադրվում ամերիկյան դիվանագետների, հատկապես՝ դեսպան Հ. Մորգենթաուի, Հալեպի ամերիկայի հյուպատոս Ջ. Ջեքսոնի, Խարպուտում (Խարբերդ) ամերիկյան հյուպատոս Լեսլի Դևիսի և ուրիշների կողմից:

Հալածյալ հայերի օգտին ամերիկյան դիվանագետների կամ այլ անձանց կատարած մարդասիրական օժանդակությունը կարելի է պայմանականորեն տարբերակել երկու խմբի՝ «մարդասիրական միջամտության» և «մարդասիրական օգնության»: Առաջին դեպքում օժանդակողի նպատակն էր փրկել զոհին՝ կոնկրետ որևէ անձի կամ խմբի, տվյալ դեպքում հայերին, իշխանությունների բռնությունից ու կամայականությունից, նրանց հետ բանակցելու, նրանցից խնդրելու կամ նրանց կամքին հակառակ ինչ-որ բան ձեռնարկելու ճանապարհով: «Մարդասիրական օգնության» նպատակն էր՝ նյութապես օժանդակել հայ հալածյալների ֆիզիկական գոյատևմանն, աշխատելով գոնե ինչ-որ կերպ թեթևացնել վերջիններիս անհամար զրկանքները: Օժանդակության առաջին ձևը ձեռնարկվում էր այն վայրերում, ուր բնակվում էին հայերը, իսկ երկրորդը՝ մարդասիրական օժանդակությունը, տեղահանյալ հայերի համակենտրոնացման վայրերում և այնտեղ, ուր նրանք կանգ էին առնում տարագրության երկար ճանապարհին:

Հայերի նկատմամբ կիրառվող բռնություններն ի հնարավորինս չեզոքացնելու ջանքեր գործադրվել են ամենատարբեր մակարդակներում, սկսած՝ դեսպանից և վերջացրած՝ առանձին անհատներով: Կ. Պոլսում ամերիկյան դեսպան Հ. Մորգենթաուն բազմիցս փորձել է միջնորդել թուրքական կառավարության առջև՝ թեթևացնելու համար հայերի վիճակն այդ երկրում: Չնայած, ընդհանուր առմամբ, թուրք պաշտոնյաները տալիս էին խուսափողական պատասխաններ կամ կեղծ խոստումներ, այնուամենայնիվ որոշ փոքր զիջումներ հնարավոր էր լինում կորզել: Այսպես, 1915թ. օգոստոսի 18-ին Մորգենթաուն տեղեկացնում է պետդեպարտամենտին, որ ըստ ներքին գործերի մինիստրի՝ Թալեաթի, «ներքին նահանգներ են հեռագրվել հրամաններ, որոնցով կաթոլիկ և բողոքական հայերն ազատվում են տարագրումից»: Թեև ինքը՝ Մորգենթաուն իրավամբ թերահավատ էր նման հրամանի իրագործման նկատմամբ և նշում էր, որ այդ հրամանը արձակված է այն ժամանակ, երբ այդ մարդկանց մեծ մասն արդեն գաղթի ճանապարհին է, սակայն միաժամանակ նշում է, որ եթե այդ հրամանն ի կատար ածվի, «կփրկի ամերիկյան միսիաների հետ կապված բազմաթիվ կյանքեր»:[23] Այս, ինչպես նաև այլ համանման դեպքերում հաճախ կարելի է նկատել, որ ամերիկյան դիվանագետների ուշադրության կենտրոնում էին բողոքական հայերը և, մասնավորապես, ամերիկյան հաստատությունների հետ որևէ առնչություն ունեցողները: Նույն այդ զեկուցագրում Հ. Մորգենթաուն նշում է նաև, որ ինքը խնդրել է իշխանություններին՝ չտարագրել

«ամերիկյան հաստատությունների հետ կապված բոլոր հայ պրոֆեսորներին, ուսանողներին, ուսուցիչներին, խնամյալներին, գթության քույրերին և այլոց»: Այդ խնդրանքը բավարարվել էր միայն դեսպանատան և հյուպատոսարանի հայ աշխատողների մասով միայն:[24]

Ինչպես կարելի է տեղեկանալ 1916 թվականի ընթացքում Հալեպում ամերիկյան հյուպատոս Ջ. Ջեքսոնի զեկուցագրերից, այդ տարվա ընթացքում Հալեպում և հարակից մի շարք շրջաններում՝ Սիրիայի տարածքում, տեղահանյալ հայերին գաղտնի ճանապարհներով բաշխվել է մարդասիրական օգնություն: Դեռ 1915թ. ընթացքում, երբ հազարավոր աքսորականների խմբեր էին ժամանում Հալեպ, հյուպատոսը մանրամասն վիճակագրական տվյալներ է հաղորդել պետդեպարտամենտ՝ տեղահանյալների քանակի և Սիրիայում նրանց տեղաբաշխման մասին: 1915թ. սեպտեմբերի 29-ին նրա ուղարկած զեկուցագրում նշվում է, որ տեղահանյալներին նվազագույն օգնություն ցուցաբերելու դեպքում կպահանջվի ամսեկան 150000 դոլար՝ անձին 1 դոլար հաշվով:[25] Ամերիկյան հյուպատոսը բերում է նաև վիճակագրական տվյալներ Հալեպում և ողջ Սիրիայում աքսորյալ հայերի քանակի, նրանց տեղաբաշխման մասին, որոնց կրկնօրինակները նա հորդորում է փոխանցել Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի և Իտալիայի կառավարություններին, որոնց շահերն էր ինքը ներկայացնում այդ շրջանում,[26] փորձելով գրավել նաև այդ երկրների ուշադրությունը: Վիճակագրական տվյալներից երևում է, որ մինչև 1915թ. սեպտեմբերը միայն երկաթուղով Հալեպ է տարագրվել 32000 հայ:[27] Այդ զեկուցագրում բերվող մեկ այլ աղյուսակի համաձայն Սիրիայի տարածքում՝ Հալեպում, Դամասկոսում, Ռաս-ուլ-Այնում աքսորական 123000 լուսավորչական հայեր կային, որոնց կարիքները հոգալու համար պահանջվում էր ամսեկան 114000 դոլար:[28] Ըստ հյուպատոսի հաղորդած տվյալների, մոտ 67000 հայ բողոքականներից ոչ պակաս՝ 70%-ն աքսորվել էր (մոտ 47000), մինչդեռ տեղ էր հասել նրանց ընդհանուր թվի 25%-ից ոչ ավելին (11750): Նրանց կարիքները հոգալու համար ըստ հյուպատոսի, պետք է տրամադրվեր օրեկան 50 լիրա (220 դոլար):[29] Կաթոլիկների կարիքները գնահատվում էին օրեկան մոտ 260 դոլար:[30]

Ջ. Ջեքսոնի ուղարկած մեկ այլ զեկուցագրի համաձայն, ըստ 1916թ. փետրվարի 3-ի տվյալների, Սիրիայի տարածք են տեղահանվել 486000 հայեր: Հյուպատոսը նշում է, որ այն 500 լիրան, որ շաբաթական ուղարկում էր Փիթը՝ ՕՄԼԱԽ-ի գանձապահը, բոլորովին չի բավարարում այդ մարդկանց՝ օրեկան 10000 թուրքական լիրա կազմող կարիքները հոգալու համար:[31]

Վերջերս Հ. Կայզերի համահեղինակությամբ լույս տեսած "At the Crossroads of Der-Zor" («Դեր Զորի քառուղիներում») աշխատությունն անդրադառնում է նաև հայերին ցուցաբերվող մարդասիրական օգնության գործում գերմանական միսիոներների և ամերիկյան պաշտոնական անձանց ու միսիոներների համագործակցության խնդրին: Կայզերը նշում է, որ 1915թ. նոյեմբերին, Կ. Պոլիս է այցելում գերմանական Deutscher Hülfsbund für christliches Liebeswerk im Orient (Արևելքի քրիստոնյաների օգնության գերմանական ընկերակցություն) կազմակերպության նախագահ Շուխարդտը, որն այնտեղ, Փիթի (ՕՄԼԱԽ-ի գանձապահի) խորհրդով հանդիպում է դեսպան Հ. Մորգենթաուին: Առաջին հանդիպումից հինգ օր անց, Շուխարդտը Մորգենթաուին է ներկայացնում Hülfsbund-ի մեկ այլ

աշխատակցի՝ Բեատրիս Ռոներին, որը նոր էր ժամանել Մարաշից՝ լի սարսափելի տպավորություններով:[32] Շուխարդտն ու Փիթը, հանդիպումների արդյունքում որոշում են ակտիվացնել համատեղ մարդասիրական ջանքերը: Որոշվում է, որ այդ ջանքերի կիրառման հիմնական վայրը Հալեպը պետք է լինի, շնորհիվ իր աշխարհագրական դիրքի և այն փաստի, որ այդ տեղով էին անցնում տարագրյալների քարավանների մեծ մասը: Այդ վայրում կայաններ չունեին ո՛չ ՕՄԼԱԽ-ը և ո՛չ էլ Hülfsbund-ը, ուստի մարդասիրական աշխատանքներն առաջ տանելու համար անհրաժեշտ էր նաև այլոց օժանդակությունը: Այդպիսի օգնություն էր ցուցաբերում ամերիկյան հյուպատոսարանը՝ հանձինս հյուպատոս Ջ. Ջեքսոնի, բացի այդ՝ դրամը տեղ հասցնելու հարցում մեծ էր Բաղդադի երկաթուղային ընկերության օժանդակությունը, որը համաձայնեց իր միջոցներով դրամը փոխանցել Հալեպ, իսկ որոշ միջոցներ էլ տեղ էին հասնում Կ. Պոլսից Հալեպ ճանապարհորդող միսիոներների միջոցով (օրինակ՝ ամերիկյան միսիոներ դր. Շեփարդը Կ. Պոլսից Հալեպ գալով, իր հետ բերեց հայերի օգնության համար նախատեսված զգալի գումար):[33]

Ինչպես երևում է Բ. Ռոների՝ Փիթին հասցեագրած հաշվետվությունից, որի կրկնօրինակը Հալեպի գերմանական հյուպատոս Ռյոսլերը ուղարկել էր ռայխսկանցլեր (վարչապետ) Բեթման-Հոլվեգին, Ռոները 1916թ. հունվարի 1-ից հուլիսի 1-ը Սիրիա տարագրված հայերի օգնության նպատակով ծախսել էր շուրջ 7400 թուրքական լիրա:[34] Հաշվետվությունից պարզվում է, որ միջոցները նրան են հասել Հալեպում ամերիկյան հյուպատոսարանի միջոցով: Որոշ «բարձրաշխարհիկ ընտանիքներ», ըստ զեկուցագրի, ամսեկան նպաստ են ստացել ուղղակիորեն հյուպատոսարանից, իսկ ուրիշները՝ միջնորդավորված ձևով:[35] Ինչպես նշվում է Հ. Կայզերի աշխատությունում, Հալեպում դրամական միջոցների բաշխմանն ակտիվ մասնակցություն են ունեցել նաև իրենք՝ հայերը:[36] Մասնավորապես, օրինակ, Խարպուտում (Խարբերդ) 1911-1917թթ. ծառայած ամերիկյան միսիոներ Ի. Հարլին իր հաշվետվությունում նշում է, որ իրենք (նկատի ունի Խարպուտում գործող ամերիկյան միսիոներներին) օգնություն են հասցրել Դեր Զոր տեղահանված հայերին՝ ամերիկյան կրթական հաստատության մի հայ ուսուցչուհու՝ Մարիցա Չոփուրյանի միջոցով:[37]

Խարպուտում ամերիկյան հյուպատոսը, բացի հայերի օգտին տեղական իշխանությունների առաջ միջնորդելուց, զբաղվել է նաև նրանց նյութական խնդիրներով: Խախտելով «տեղահանության մասին ժամանակավոր օրենքը», որով արգելվում էր թաքնվող կամ փախուստի մեջ գտնվող հայերին պատսպարել կամ որևէ կերպ օգնել, Լ. Դևիսը մի շարք հայերի, որոնք այս կամ այն կերպ կապ ունեին ԱՄՆ-ի հետ (ասենք, ազգականներ ունեին ԱՄՆ-ում կամ ամերիկյան հաստատություններում էին աշխատել) պատսպարում էր հյուպատոսարանի շենքում: Դևիսը նյութական օժանդակություն է տրամադրել նաև այն մարդկանց, ում դեռ տարագրում չէր սպառնում, բայց որոնց նյութական վիճակը ծանր էր:[38]

Շատ դեպքերում տարագրության ենթակա հայերը փորձում էին նրանց միջոցով փրկել գոնե իրենց ունեցվածքը: Դևիսը գրում է, որ տարագրվող հայերը, համոզված լինելով, որ իրենց ճանապարհին կկողոպտեն, իրեն և քաղաքում գտնվող ամերիկյան միսիոներներին էին պահ տալիս իրենց արժեքավոր իրերը, ոսկեղենը, արժեթղթերը, դրամը: Դևիսն ընդունում է դրանք՝ սահմանափակ չափով, քանզի դժվար կլիներ ընդունել

բոլորի խնդրանքները, իր միջոցները պահ տվող անձից պահանջելով այն մարդու հասցեն, ում, պահ տվողի մահվան դեպքում, պետք է հանձնվեին այդ միջոցները: Ի վերջո, Դևիսի հաշվետվության մեջ պարունակվող տվյալների համաձայն, հյուպատոսարանի գանձարկղում պահվող հայերի կողմից ի պահ տրված դրամական միջոցներն անցնում էին 1000 դոլարից (ոսկով): Ինչ վերաբերում է միսիոներների մոտ ի պահ տրված գումարներին, դրանց մի մասը հաջողվել է տեղափոխել Կ. Պոլիս, ուր ավելի ապահով էր:[39] Ի վերջո, հայերի գումարները ամերիկացիների կողմից թաքցնելու փաստերը հայտի դարձան տեղի թուրքական իշխանություններին և պատճառ դարձան որոշակի լարվածության՝ երկու կողմերի միջև: Այսուհանդերձ, ամերիկյան հյուպատոսը տեղի տեղի չտվեց և այդ գումարներից համարյա ոչինչ չանցնավ իշխանությունների ձեռքը:[40]

Սամսունում նույնպես, ինչպես Խարպուտում, հայերը փորձում էին իրենց ունեցվածքը ի պահ թողնել ամերիկյան դիվանագետների մոտ: Այդ քաղաքում ծառայող ամերիկյան հյուպատոսական գործակալ Վ. Փիթերը իր զեկուցագրերից մեկում նշում է. «մի քանի հայեր, նախքան մեկնելը [իմա՝ տարագրվելը] ինձ մոտ են թողել դրամ և զարդեղեն ... Թուրքերը, բնականաբար, ոչինչ չգիտեն այդ պահուստների մասին, բայց նրանք պետք է որ իմանան այս զեկուցագրերից, ինչը նրանց կկատաղեցնի»:[41]

Սակայն այլ ամերիկյան հյուպատոսներ իշխանությունների հետ հարաբերություններում ընդունել էին ավելի զգուշավոր դիրք: Օրինակ, Տրապիզոնում ամերիկյան հյուպատոս Օ. Հայզերը, իր զեկուցագրերից մեկում նկարագրում է իր հյուպատոսական շրջանում հայերի նկատմամբ կատարվող ոճիրները և միաժամանակ նշում, որ իր խորհրդով Տրապիզոնում գտնվող ամերիկյան միսիոներ Քրոուֆորդը ԱՄՆ-ի դեսպանության հասցեով ուղարկել է շտապ հեռագիր՝ շրջանի հայ կանանց ու երեխաների օգտին միջամտելու խնդրանքով, որը պետք է փոխանցվեր ՕՄԼԱԽ-ի ներկայացուցիչ Փիթին: Միաժամանակ, հյուպատոսը նշում է, որ եթե տեղեկությունը առաջինը հասնի Կ.Պոլսի դեսպանատուն և միջոցներ ձեռնարկվեն այնտեղից, ինքը կխուսափի տեղական իշխանությունների հետ անախորժություններից, մանավանդ նկատի ունենալով այն փաստը, որ իրեն արդեն հաջողվել էր տարագրումից ազատել հյուպատոսարանի երեք հայ ծառայողների:[42]

Երկար տարիներ Խարպուտում (Խարբերդ) ծառայած Թ. Ատկինսոնը՝ այդ քաղաքում ամերիկյան հիվանդանոցում աշխատող բժշկի կինը, ՕՄԼԱԽ-ի քարտուղարին ներկայացրած իր հաշվետվությունում նշում է, որ երբ տեղական իշխանությունների հրամանով ձերբակալել են Խարպուտի հիվանդանոցում ծառայող ինը հայ զինվոր, ինքը փորձել է տեղական զորահրամանատարին խնդրել, որ վերջինս ազատի եթե ոչ բոլորին, ապա գոնե նրանցից «ամենափայլունին»՝ Սուրեն անունով մի հայ երիտասարդի: Նույն օրը Սուրենն ազատվում է բանտից և մեկ ու կես տարի Խարպուտի ամերիկյան հիվանդանոցում ծառայելուց հետո Դերսիմի վրայով փախչում է Կովկաս:[43] Խարպուտի ամերիկյան հիվանդանոցը, ամերիկյան հյուպատոս Լ. Դևիսի աջակցությամբ, 1915-ի կեսերից կազմակերպեց ընդհատակյա մի երթուղի, որով հարյուրավոր հայեր Դերսիմի վրայով (որտեղի քուրդ առաջնորդները ապահում էին անվտանգ անցումը՝ որոշակի վճարի դիմաց) անցան Կովկաս:[44] Ամերիկյան հիվանդանոցը վերածվել էր մի տեսակ կայանի, որից սկիզբ էր առնում դեպի ապահովություն տանող

այդ երթուղին: Թ. Ատկինսոնը նշում է, որ 1915-ի դեկտեմբերի 25-ի դրությամբ (երբ մահացավ նրա ամուսինը՝ դոկտոր Ատկինսոնը) հիվանդանոցն ուներ 65 «հիվանդանոցային աշխատողներ» ձևակերպված հայեր, ինչպես նաև ամերիկյան միսիոներները Մեզրեռում (Խարպուտին կից գտնվող քաղաք) վարձել էին երեք տուն, որոնցից մեկը լի էր այդ «աշխատողների» երեխաներով (առնվազն 35 հոգի), իսկ մյուսները՝ այլ փախստական հայերով:[45] Ատկինսոնը նշում է, որ 1917թ. Թուրքիայից իր մեկնելուց առաջ հիվանդանոցում մնացել էին 16 հայ ծառայողներ ու բուժքույրեր, իսկ մնացածը Դերսիմի վրայով փախել էին Կովկաս: ԱՄՆ մեկնելուց հետո Ատկինսոնը ստացել էր նամակ ամերիկյան միսիայի համար ծառայող դեղագործից, ըստ որի այդ ժամանակ (1917թ. աշնանը) 70-80 խնամյալներ կային հիվանդանոցում, համարյա բոլորը հայեր և որ հիվանդանոցի հայ ծառայողները դեռ տեղում էին:[46]

Դեռևս 1915թ. սեպտեմբերի 3-ին ԱՄՆ-ի դեսպան Հ. Մորգենթաուն պետդեպարտամենտ հղված իր զեկուցագրում առաջարկում էր ԱՄՆ-ում ստեղծել մի խումբ՝ բաղկացած ՕՄԼԱԽ-ի անդամներից, տարագրյալ հայերի համար միջոցներ հայթայթելու և դրանք հասցեատերերին հասցնելու նպատակով:[47] Ի պատասխան այդ զեկուցագրի՝ նույն ամսվա 22-ին ուղարկված հեռագրում, պետքարտուղարը հարցում է անում դեսպանին, թե արդյոք նա ի վիճակի՞ է «արդյունավետ օգտագործել 50-100000 դոլար՝ հայերի օգնության նպատակով»:[48]

Սեպտեմբերի 25-ին «Նյու Յորք Թայմսը» տպագրեց ՕՄԼԱԽ-ի կոչը ամերիկացիներին՝ օգնելու հայ տարագրյալներին: Հոդվածից տեղեկանում ենք նաև, որ ՕՄԼԱԽ-ի ներկայացուցիչները խորհրդակցել են պետդեպարտամենտի ներկայացուցիչների հետ՝ տուժած հայերին ցուցաբերվելիք օգնության ծրագրի վերաբերյալ:[49] Այնուամենայնիվ, պաշտոնական Վաշինգտոնը խուսափեց այս կարգի միջոցառումներին պաշտոնապես մասնակցելուց՝ «Թուրքիայի ներքին գործերին խառնվելու» պատճառով նրա զայրույթը չհարուցելու նպատակով:[50] Հոկտեմբերի 7-ին լրագիրը նաև տեղեկացնում էր, որ նախորդ օրը Ռոքֆելլեր հաստատությունը 30000 դոլար էր նվիրաբերել հայերի օգնության համար ստեղծված հիմնադրամին: Ըստ լրագրի՝ մինչ այդ պահը հիմնադրամին հաջողվել էր հավաքել շուրջ 75000 դոլար:[51]

«Նյու Յորք Թայմսի» հոկտեմբերի 9-ի մի հրապարակումից պարզվում է, որ Հ. Մորգենթաուն՝ ի պատասխան պետդեպարտամենտի հարցման, զեկուցել է, որ ինքը «ամենաարդյունավետ ձևով» պատրաստ է տնօրինել 100000 դոլար՝ հայերին օգնելու նպատակով, և որ այդ գումարի առաջին նվազն արդեն փոխանցվել է նրան: Թերթը, վկայակոչելով Մորգենթաուին, հայտնում էր, որ ստացված գումարը բաշխվելու էր Կոնիայում, Աղանայում, Թարսուսում և Ուրֆայում գտնվող միսիոներական կայաններին, ինչպես նաև Հալեպի ամերիկյան հյուպատոսության միջոցով:[52]

Ինչպես նշում է Ջ. Գրաբիլը, «հայերի օգտին ծավալված մարդասիրական շարժումը ԱՄՆ-ում, արևմուտքում ծավալված նմանօրինակ շարժումների մեջ ամենամեծերից էր»:[53] Այդ շարժման գլուխ էին կանգնած ԱՄՆ-ում ազդեցիկ և հարգված մարդիկ, ինչպես օրինակ Քլիվլենդ Դոջը, Չարլզ Քրեյնը, Հենրի Մորգենթաուն, Ջեյմս Բարտոնը, և ուրիշներ: Նրանք բոլորն էլ այս կամ այն չափով կապեր ունեին և՛ նախագահ Վ. Վիլսոնի, և՛ միսիոներական շրջանների հետ՝ որոշ դեպքերում իրենք լինելով այդ

շրջաններում կարևոր դեմքեր: Ք. Դոջը՝ օրինակ, մեծապես նպաստել էր Վիլսոնի նախագահական ընտրարշավին, ինչպես նաև լայն կապեր ուներ Օսմանյան կայսրությունում գործող ամերիկյան միսիոներների հետ: Նմանապես Վիլսոնի ընտրարշավին ակտիվորեն մասնակցել էին միլիոնատեր Չ. Քրեյնը, որը, միևնույն ժամանակ, Կ. Պոլսի իգական քոլեջի խորհրդի նախագահն էր: Հ. Մորգենթաուն, լինելով մասնագիտությամբ իրավաբան, Վիլսոնի ընտրարշավի ժամանակ գլխավորել էր նրա ընտրաշտաբը: Մորգենթաուն սերտ կապեր ուներ ՕՄԼԱԽ-ի նախագահ Ջ. Բարտոնի և, ընդհանրապես, ամերիկյան միսիոներական շրջանների հետ:[54] Ջ. Բարտոնը, 1915թ. հոկտեմբերին գլխավորեց Հայերի կոտորածների ուսումնասիրման կոմիտեն (Committee on Armenian Atrocities-CAA), իսկ 1915թ. նոյեմբերից՝ ՀՍՕԱԿ-ը, Վիլսոնի մտերիմներից էր:[55] Ցեղասպանությունից մազապուրծ հայերի համար նյութական միջոցների հավաքումն ապահովելու համար այդ մարդկանց գլխավորությամբ ստեղծված կազմակերպությունները, որոնք հաջորդաբար կրում էին «Հայերի և սիրիացիների օգնության ամերիկյան կոմիտե» (ACASR-ՀՍՕԱԿ), «Մերձավոր Արևելքի օգնության ամերիկյան կոմիտե» (ACARNE-ՄԱՕԱԿ) և «Մերձավոր Արևելքի նպաստամատույց» (NER-ՄԱՆ) անվանումները, կազմակերպում էին ԱՄՆ-ում հայերի օգնության համար միջոցների հավաքագրումը՝ միաժամանակ իրենց ազդեցությունն օգտագործելով թուրք-ամերիկյան հնարավոր բախումը կանխելու նպատակով:[56] Այդ նպաստամատույց կազմակերպությունները, բացի միջոցներ հավաքելուց, զբաղվում էին միաժամանակ հայերի նկատմամբ համակրանքի քարոզչությամբ: 1916թ. սեպտեմբերին Ջ. Բրայսի հեղինակությամբ լույս տեսած «Կապույտ գիրքը» (The Treatment of the Armenians in the Ottoman Empire), որն, իրականում, կազմված ու համակարգված էր պատմաբան Ա. Թոյնբիի և ՕՄԼԱԽ-ի կողմից, 3000 օրինակով բաժանվեց ԱՄՆ-ում. այդ գրքի ստացողներից էին նաև նախագահ Վ. Վիլսոնը և նրա խորհրդական, այն ժամանակ ԱՄՆ-ում ազդեցիկ դեմք, գնդապետ Հաուսը: 1916-ի կեսերին ԱՄՆ-ի 16 նահանգների 36 քաղաքներում ստեղծվեցին կազմակերպության տեղական կոմիտեներ, որոնցից յուրաքանչյուրը հայերին օգնելու նպատակով դրամահավաքին զուգահեռ տանում էր նաև հայամետ քարոզչություն:

ՕՄԼԱԽ-ի նախագահ Ջ. Բարտոնը դիմեց ԱՄՆ-ի կոնգրեսին՝ հայերին և սիրիացիներին կարեկցանք արտահայտող հայտարարություն ընդունելու, ինչպես նաև ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնին՝ հայերի և սիրիացիների օգտին հանգանակությունների օր սահմանելու խնդրանքով:[57] Ինչպես 1916թ. փետրվարի 10-ի համարում նշում է «Նյու Յորք Թայմսը», նախորդ օրը, համաձայն սենատոր Լոջի առաջարկի, սենատը որոշում է ընդունել՝ դիմել ԱՄՆ-ի նախագահին՝ հայերի և սիրիացիների օգտին հանգանակությունների օր սահմանելու առաջարկով:[58] Կոնգրեսը 1916թ. հուլիսի 18-ին հաստատեց սենատի որոշումը և այն ուղարկեց նախագահին՝ վերջնական հաստատման: 1916թ. օգոստոսի 31-ին ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնը ստորագրեց մի հրամանագիր, որով նույն տարվա հոկտեմբերի 21-ն ու 22-ը հայտարարվում էին հայերի ու սիրիացիների օգտին կազմակերպվող հանգանակությունների օրեր:[59] Ինչպես նշում էր հայկական ռուսալեզու "Армянский вестник" թերթը, հանգանակությունը կատարվելու էր ԱՄՆ-ի ողջ տարածքում գտնվող շուրջ 120000 եկեղեցիներում:[60]

Խոսելով ԱՄՆ-ում ամերիկյան միսիոներների սկսած հայանպաստ արշավի մասին, Ջ. Գրաբիլը նշում է, որ «ամերիկյան ժողովուրդն առատաձեռնորեն արձագանքեց» հայերի ողբերգությանը: Ըստ Գրաբիլի, միայն Ռոքֆելեր հիմնարկությունը 1915 և 1916թթ. ընթացքում հիմնադրամին է նվիրաբերել 300000 դոլար: 1916թ. հիմնադրամին է հատկացվել նաև Հարվարդ-Եյլ ֆուտբոլային խաղի ողջ հասույթը: Կոմիտեի անդամներից մեկին՝ Ք. Դոջին հաջողվեց ստանալ ԱՄՆ-ում ամենահարուստ բարեգործական կազմակերպության՝ Ամերիկյան կարմիր խաչի աջակցությունը, ինչպես նաև հաջողվեց ապահովել բարոյական ու քարոզչական աջակցություն "Christian Herald" և "Literary Digest" թերթերից: Մինչև ԱՄՆ-ի՝ Առաջին համաշխարհային պատերազմի մեջ մտնելը, Գրաբիլի կարծիքով, նպաստամատույց կազմակերպությանը հաջողվել է հայերի օգնության նպատակով հավաքել ավելի քան 2000000 դոլար՝ դառնալով ԱՄՆ-ում իր եկամուտներով երկրորդ խոշոր մարդասիրական կազմակերպությունը:[61]

ԱՄՆ-ում տարվող հայանպաստ շարժմանն արձագանքում էր նաև հայկական մամուլը: 1915-ից 1917թթ. ԱՄՆ-ում տեղի ունեցած հայերի օգտին հանգանակությունները, բարեգործական երեկույթները, համերգները ու այդ կարգի այլ միջոցառումները եղել են, մասնավորապես, ռուսալեզու "Армянский вестник" լրագրի ուշադրության կենտրոնում: Այսպես, 1916թ. թերթի 12/13-րդ համարում նշվում է, որ նույն թվականի փետրվարի կեսերին Նյու Յորքում ԱՄՆ-ի նախկին դեսպան Հ. Մորգենթաուի կինը կազմակերպել է մի բարեգործական տոնավաճառ, որին մասնակցել են նաև «ԱՄՆ-ում հավատարմագրված մի շարք դիվանագետներ, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնատար անձինք»:[62] Լրագիրը նաև ընթերցողներին տեղյակ էր պահում ԱՄՆ-ում հայերի օգտին կազմակեպված միջոցառումների մասին: Այսպիսի մի հաղորդագրություն կար թերթի 1916թ. առաջին համարում, ուր ներկայացվում էր Հայերի կոտորածների ուսումնասիրման ամերիկյան կոմիտեի կոչ-հայտարարությունը, որում խստորեն դատապարտվում էր հայերի՝ «քաղաքակրթության նկատմամբ իր սիրով և առևտրա-արդյունաբերական ոլորտում իր ունակություններով իրեն շրջապատող տարրերին գերազանցող» ժողովրդի նկատմամբ կիրառված անմարդկային հալածանքներն ու տանջանքները: Կոչ-դիմումում ամերիկյան ժողովրդին հորդորվում էր չխնայել միջոցներ՝ անօգնական հայերի դժվարությունները թեթևացնելու համար: Թերթը նաև տեղեկացնում էր, որ վերոհիշյալ կոմիտեն դիմել է ԱՄՆ-ի բոլոր եկեղեցիներին՝ հայերի օգտին հանգանակությունների օր սահմանելու խնդրանքով: Անդրադառնալով նաև Կովկասում ամերիկյան մարդասիրական կազմակերպությունների կողմից հայերին տրվող օժանդակությանը, թերթը նշում էր, որ ԱՄՆ-ից Թիֆլիս էին ժամանել ամերկյան միսիոներներ Հիլը և Վիլսոնը: Այս երկուսը նպատակ ունեին պարզել այն կարիքները, որ ունեին Երևանի ու Ելիզավետպոլի նահանգներ գաղթած արևմտահայության մազապուրծ բեկորները և պարզեին այն ձևը, որով ավելի նպատակահարմար կլիներ առաքել այդ օգնությունը:[63] Լրագրի մեկ այլ համարում զետեղված էր մի հաղորդագրություն, համաձայն որի 1916թ. մարտի 27-ին Կոլումբիայի համալսարանի սլավոնական և սեմական դեպարտամենտների կողմից համալսարանի մեծ դահլիճում կազմակերպվել էր հայկական երեկո: Երեկոյի ժամանակ հանգանակված ողջ գումարը փոխանցվել էր Ռուսաստան՝ Կովկասում ապաստանած հայ փախստականներին օգնություն ցույց տա-

լու նպատակով:[64]

Ամփոփելով, հարկ ենք համարում փաստել, որ Հայոց ցեղասպանության նախորդող ժամանակաշրջանում և ընթացքում ԱՄՆ-ն Օսմանյան կայսրության նկատմամբ քաղաքականությունում առաջնորդվել է իր բազմաբնույթ շահերով, որոնք Հայոց ցեղասպանությանը արձագանքելու խնդրում թելադրում էին որոշակի իրարամերժ քայլեր: Եթե ԱՄՆ-ի տնտեսական ու քաղաքական շահերը թելադրում էին նրան՝ խուսափել Հայկական հարցում միջամտելուց, ապա այդ նույն շահերի մեկ այլ կողմը՝ այսպես կոչված «մարդասիրական շահերը» պահանջում էին նրանից՝ պաշտպանել հայերին ցեղասպանությունից: Փաստորեն, պաշտոնական Վաշինգտոնը խուսափեց այդ երկու քաղաքական այլընտրանքներից որևէ մեկին նախապատվություն տալուց, այլ բռնեց միջին, խուսանավող դիրք: Մի կողմից ԱՄՆ-ն ոչ պաշտոնական և ոչ խիստ ձևակերպված դիմում-բողոքներ էր հղում թուրքական կառավարությանը, իսկ մյուս կողմից՝ ամերիկյան մարդասիրական կազմակերպություններն ամեն ջանք գործ էին դնում փրկելու հայության մազապուրծ բեկորները: ԱՄՆ-ի կառավարող շրջանները որոշակիորեն հովանավորում էին մարդասիրական կազմակերպությունների նման ջանքերը՝ առանց սակայն այդ հովանավորությանը հրապարակային բնույթ տալու, խուսափելու համար Թուրքիայի հնարավոր հակազդեցությունից: Մարդասիրական կազմակերպությունները (մասնավորապես՝ ՕՄԼԱԽ-ը) լայն ցանց ունենալով Օսմանյան կայսրության տարածքում և կապեր՝ պաշտոնական Վաշինգտոնի հետ, հաջողությամբ էին իրականացնում հայերի օգտին դրամահավաքը ԱՄՆ-ում, ինչպես նաև այդ միջոցների բաշխումն Օսմանյան կայսրությունում ու հայօգուտ քարոզարշավը ԱՄՆ-ում: Օգնության հարցում մեծ ավանդ են ներդրել նաև որոշ ամերիկյան դիվանագետներ՝ երբեմն գործելով սեփական հայեցողությամբ ու հայերին փրկելու նպատակով խախտելով իրենց դիվանագիտական լիազորությունների շրջանակը:

ԱՄՆ-ի մարդասիրական օժանդակությունը շատ հայ տարագրյալների համար եղավ այն հույսի նշույլը, որ օգնում էր գոյատևել Հայոց ցեղասպանության դժնդակ ժամանակաշրջանում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Новая история Армении в трудах современных зарубежных авторов, отв. ред. Саакян Р. Г., Ереван, 1993, стр. 115.
[2] Grabill J. "Protestant Diplomacy and the American Mandate for Armenia. 1914-1920," in *Recent Studies in Modern Armenian History*, Cambridge, MA: Armenian Heritage Press, 1972, p. 56.
[3] Gordon L. J. *American Relations with Turkey: An Economic Interpretation, 1830-1930*, Philadelphia, 1932, p. 222.
[4] Grabill J. op. cit., p. 55.
[5] Шпилькова И. В. Империалистическая политика США в отношении Турции (1914-1920гг.), Москва, Политиздат, 1960, стр. 41.
[6] Gordon L. op. cit., pp. 27-28.
[7] Петросян Ю. Внешнеэкономические связи Османской империи в новое время, конец XVIIIв.-начало XXв., Москва, 1989, стр. 149, таб. 8.
[8] Gordon L. op. cit., p. 60, tab. 7.

[9] Bryce V. *The Treatment of Armenians in the Ottoman Empire*, London, 1916, pp. 650-651.
[10] *Papers Relating to the Foreign Relations of the United States: 1915: Supplement: the World War*, Washington: 1928, p. 980, file no. 867.4016/58a.
[11] Ibid, p. 980.
[12] Ibid, p. 981, file no. 867.4016/60.
[13] Ibid, p. 983, file no. 867.4016/74.
[14] *Papers Relating* ..., pp. 983-984, file no. 867.4016/74.
[15] Ibid, pp. 986-987, file no. 867.4016/90.
[16] *Papers Relating* ..., p. 988, file no. 867.4016/218a.
[17] *New York Times*, 16 October, 1915; 8:7.
[18] *Papers Relating* ..., p. 984, file no. 867.118/341.
[19] Ibid, pp. 984-985, file no. 867.4016/341.
[20] *The Armenian Genocide in the Canadian Press, vol. 1, 1915-1916*, Montreal: 1985, pp. 143-144.
[21] Համբարյան Ա. Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898-1908), Երևան, 1999, էջ 16:
[22] Trumpener U. *Germany and the Ottoman Empire 1914-1918*. New York: Caravan Books, 1989, p. 156.
[23] *Papers Relating* ..., p 987, file no. 867.4016/99.
[24] Ibid.
[25] *United States Official Documents on the Armenian Genocide*, Compiled and introduced by A. Sarafian, Vol. 1: The Lower Euphrates, Watertown, Mass.: Armenian Review, 1993, p. 95.
[26] Ինչպես հայտնի է, այդ երկրների կողմից Թուրքիային պատերազմ հայտարարելուց հետո, նրանց շահերը Թուրքիայում ներկայացնելու իրավունքը հանձնվել է ԱՄՆ-ի դիվանագիտական ներկայացուցչներին:
[27] *United States Official Documents* ..., p. 98.
[28] Ibid, p. 100.
[29] Ibid, pp. 101-102.
[30] Ibid, p. 106.
[31] Ibid, p. 112.
[32] Kaiser H. *At the Crossroads of Der-Zor: Death, Survival, and Humanitarian Resistance in Aleppo, 1915-1917*, Reading, UK: Taderon Press, 2001, p. 36.
[33] Ibid, p. 37.
[34] Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919). Материалы политархива МИД кайзеровской Германии, сост. отв. ред. В. Микаелян, Ереван, 1995, стр. 242-343, R 14092, Ab. 17939.
[35] Там же, стр. 345.
[36] Այդ մասին տես՝ Kaiser H. op. cit., pp. 38-53.
[37] *"Turkish Atrocities," Statements of the American Missionaries on the Destruction of the Christian Communities in Ottoman Turkey, 1915-1917*, compiled by James Barton, Ann Arbor: Gomidas Institute, 1998, p. 69.
[38] Davis L. *La Province de la mort; Archives Américaines concernant le génocide des Arméniens (1915)*, Bruxelles: Ed. Complexe, 1994, pp. 143-147.
[39] Ibid, p. 132
[40] Ibid, p. 133.
[41] Kévorkian R. H., Sarafian A. "Documents consulaires américains sur la déportation des Arméniens de Samsoun durant la Première Guerre mondiale," dans *Revue d'histoire arménien moderne et contemporain*, Paris, 1995, tome 1., p. 115.
[42] *Genocide: Crime against Humanity*, Armenian Review (Special Issue), Spring 1984, Vol. 37, Number 1, pp. 91-92.

[43] *"Turkish Atrocities," Statements of the American Missionaries on the Destruction of the Christian Communities in Ottoman Turkey, 1915-1917*, compiled by James Barton, Ann Arbor: Gomidas Institute, 1998, pp. 42-44.
[44] Ibid, p. 47.
[45] Ibid, p. 52.
[46] Ibid, pp. 53-54.
[47] *Papers Relating* ..., p. 988, file no. 4016/117.
[48] Ibid, p. 988. no file no.
[49] *New York Times*, 25 September, 1915; 3:3,4.
[50] Ibid, 7 October, 1915; 3:5.
[51] Ibid.
[52] *New York Times*, 9 October, 1915; 6:6.
[53] Grabill J. "Protestant Diplomacy and the American Mandate for Armenia, 1914-1920," in *Recent Studies in Modern Armenian History*, Cambridge, MA: Armenian Heritage Press, 1972, p. 56.
[54] Ibid.
[55] Sarafian A. "The Archival Trail: Authentication of *The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-1917*" in *Remembrance and Denial: The Case of the Armenian Genocide*, ed. by R. Hovannisian, Detroit: Wayne University Press, 1998, pp. 54-55.
[56] Ibid, pp. 56-57, տես նույնպես Barton J. *Story of Near East Relief (1915-1930): An Interpretation*, New York: Macmillan, 1930, pp. 3-19.
[57] Ibid, p. 57
[58] *New York Times*, 10 February, 4:3.
[59] *The Armenian Genocide: Documents and Declarations, 1915-1995*, compiled and introduced by H. Sassounian, Glendale, 1995, p. 22.
[60] Армянский вестник, N 40, 1916, стр. 16
[61] Grabill J. op. cit., p. 58.
[62] Армянский вестник, N 12/13, 1916, стр. 13.
[63] Там же, N 1, 1916, стр. 19.
[64] Там же, N 15, 1916, стр. 17.

Резюме

Интересы США в Османской империи и гуманитарное содействие армянам, пережившим Геноцид (1915-1917гг.).

Тигран Закарян

Проблема гуманитарного содействия армянам, пережившим Геноцид, является одной из малоосвещенных в Армянской историографии. В исследовании данной проблемы нужно уделять должное внимание природе и объему интересов США в Османской империи к началу XX века. На самом деле эти интересы были довольно разношерстными и несколько противоречивыми, особенно так называмые "гуманитарные" и политико-экономические интересы. Руководству США удалось избежать упреков со стороны турецкого правительства по поводу "вмешательства во внутренные дела", которое могло довести до нежелательных трений с Турцией. Тем не менее, американские миссионерские организации проявляли большую активность в деле помощи бедствующим армянам. Американское правление уполномоченных по иностранным миссиям (АПУИМ), которое обладало влиятельными контактами в вашингтонской администрации, также получало закулисную поддержку со стороны последней при оказании помощи страдающим армянам. Американские дипломаты в Турции, не только учавствовали в этой акции, но также всячески пытались уберечь от депортации армян, так или

иначе связанных с американскими учереждениями в Турции. В некоторых случаях они даже превышали свои полномочия. В целом можно утверждать, что несмотря на американо-турецкие теплые отношения и нежелание США подвергнуть опасности свои отношения с Турцией из-за "армянской проблемы", американские правящие круги пытались через неофициальные каналы как-то облегчить участь бедствующих армян.

Summary

The US Interests in the Ottoman Empire and the Humanitarian Assistance to the Survivors of the Armenian Genocide (1915-1917)

Tigran Zakaryan

The issue of providing humanitarian help to the survivors of the Armenian Genocide is one of the scarcely covered topics in modern Armenian historiography. In the research of this topic one should seriously take into consideration the nature and extent of the US interests in the Ottoman Empire at the beginning of the 20th century. In fact, those interests were rather multi-layered and to some degree, mutually contradicting, namely the "humanitarian" and the political- economic interests. The US administration managed to avoid being blamed by the Turkish government for "interfering with Turkey's domestic affairs," which could lead to the undesirable frictions with Turkey. However, US missionary organizations were very active in their efforts to bring relief for suffering Armenians. The ABCFM (American Board of Commissioners for Foreign Missions) having influential contacts in the Washington administration, also enjoyed backstage support by the latter in its relief efforts. American diplomats in Turkey, besides taking part in those relief efforts, did their best in trying to secure exemption from deportation for those Armenians who were in some way related to the American institutions in Turkey. In some cases their efforts even went beyond their authority. On the whole one can state that notwithstanding the friendly US-Turkish relations, and the US reluctance to jeopardize its relations with Turkey over the "Armenian problem," the US exerted non-official attempts at assisting suffering Armenians during the Armenian Genocide.